# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 1

## N ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-23/2024/ՔՈԳՎ
## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** «02» «08» 2024թ.

**ՀՀ ներքին գործերի նախարարությունը,** ի դեմս ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արթուր Խաչատրյանի, (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով **27.05.2024թ.-ին** կնքված **ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-23/2024/ՔՈԳՎ** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 և 7.16 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը**

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-23/2024/ՔՈԳՎ** ծածկագրով գնման պայմանագրի 4.1 կետով սահմանված **25 000 000 (քսանհինգ միլիոն)** ՀՀ դրամից սահմանել **500 000 (հինգ հարյուր հազար)** ՀՀ դրամը ներառյալ ԱԱՀ-ն, որի վճարումը պատվիրատուի կողմից կիրականացվի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան, իսկ մնացած **24 500 000 (քսանչորս միլիոն հինգ հարյուր հազար)** ՀՀ դրամ գումարը կիրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո լրացուցիչ համաձայնագրի կնքման միջոցով: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

1.3 Համաձայնագրի պայմանները կիրառվում են նաև պայմանագիրը կնքելուց հետո մինչև սույն համաձայնագրի կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀ ներքին գործերի նախարարություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011042471**
**ՀՎՀՀ 02882913**
**Հեռ. 010 59-68-57**
**Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am**
**Ա. Ֆիդանյան**
**/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /**
**(ստորագրություն)**
**Կ.Տ.**

**ԿԱՏԱՐՈՂ**
**«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ**
**հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 50, բն. 3**
**բանկ՝ Հայէկոնոմբանկ Տիգրան Մեծ մ/ճ**
**Հ/Հ 163288639103**
**ՀՎՀՀ 01006813**
**Հեռ. /+37410/ 50-60-00,**
**Բջջ. /+37491/ 70-75-85, /+37493/ 70-99-66**
**Էլ. Փոստ: artconsulting@mail.ru**
**Ա. Խաչատրյան**
**/տնօրեն/**
**(ստորագրություն)**
**Կ.Տ.**

*Հավելված N 1*
*«02» «08» 2024թ.*
*ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-23/2024/ՔՈԳՎ ծածկագրով*
*գնման պայմանագրի համաձայնագրի*

**Վճարման ժամանակացույց**

Ծառայություն /03.01.01.02/ ՀՀ դրամ

| իրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 79541100/511 | Բանավոր թարգմանչական ծառայությունների մատուցում | | | | | | | | 300 000 | 300 000 | 300 000 | 300 000 | 300 000 | 300 000 |
| 2 | 79531100/512 | Գրավոր թարգմանչական ծառայությունների մատուցում | | | | | | | | 200 000 | 200 000 | 200 000 | 200 000 | 200 000 | 200 000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-68-57
Էլ. հասցե՝ gnumner@mia.gov.am

Ա. Ֆիդանյան
/ ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար /
(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ
հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 50, բն. 3
բանկ՝ Հայէկոնոմբանկ Տիգրան Մեծ մ/ճ
Հ/Հ 163288639103
ՀՎՀՀ 01006813
Հեռ: /+37410/ 50-60-00,
Բջջ. /+37491/ 70-75-85, /+37493/ 70-99-66
Էլ. Փոստ: artconsulting@mail.ru

Ա. Խաչատրյան
/տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ